Ծ Ա Ն Ու Ց Ու Մ

ՀԱՅՏԱՐԱՐԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՇԱՀԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԸ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ՝ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պարտականության իրականացման վերաբերյալ ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումը.

1. Այն պաշտոնատար անձինք, ովքեր «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն 2020 թվականի հունվարի 1-ից օրենքի ուժով համարվում են հայտարարատու մինչև 2020 թվականի մարտի 31-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում 2019 թվականի տարեկան հայտարարագիր:
2. «Հանրային ծառայություն մասին» ՀՀ օրենքի օրենքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն պաշտոնավարող հայտարարատու պաշտոնատար անձինք առաջին անգամ շահերի վերաբերյալ տվյալներ են ներկայացնում 2019 թվականի տարեկան հայտարարագրում՝ 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ: Հայտարարագրերի ներկայացման վերջնաժամկետը 2020 թվականի մարտի 31-ն է:
3. Այս պահին հայտարարատու պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամների կողմից լրացվող տարեկան, պաշտոնեական պարտականություններն ստանձնելու և պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու հայտարարագրերի օրինակելի ձևերը հաստատելու վերաբերյալ ՀՀ Կառավարության որոշման նախագիծը գտնվում է լրամշակման փուլում:
4. ՀՀ Կառավարության որոշումն ընդունվելուց և ուժի մեջ մտնելուց հետո 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի տարեկան հայտարարագրերն

էլեկտրոնային համակարգում հասանելի կդառնան լրացման համար: Հայտարարատու պաշտոնատար անձինք և նրանց ընտանիքի անդամները 2019 թվականի տարեկան հայտարարագրերը, իսկ այն հայտարարատու պաշտոնատար անձինք, ովքեր պաշտոնեական պարտականություններն ստանձնել կամ դադարեցրել են 2020 թվականին, պաշտոնի ստանձման կամ դադարեցման հայտարարագրերը պետք է լրացնեն նոր ձևանմուշով:

5. Այն հայտարարատու պաշտոնատար անձինք, որոնք պաշտոնեական պարտականություններն ստանձնել կամ դադարեցրել են մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը, պաշտոնի ստանձման կամ դադարեցման հայտարարագիրը ներկայացնում են հին (ՀՀ Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1819-Ն որոշմամբ սահմանված) ձևանմուշով: Նրանց համար file-online.ethics.am հայտարարագրերի ներկայացման էլեկտրոնային համակարգը հասանելի է: